ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 2-143

«22» 12 2015թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասով, Ձեզ ենք ներկայացնում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի կայացած թիվ 6 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 10 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112-71/3880-15
22 12 2015թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 45 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՆԻՍՏԻ

45.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի, ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

46-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

47.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ, 0-ԻՑ 10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

48.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹԻՎ 01-63 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

49.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

50.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՄՐԳԱՍՏԱՆԻ Գ/Պ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2015 թվական թիվ 45

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի, թիվ 6 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական դեկտեմբերի 14
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2015թվականի թիվ 46-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 3-րդ կետով, հոդված 54-ով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 56-ի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2016թվականի բյուջեն.
Եկամուտների գծով՝ 31108.2 հազար դրամ.
Ծախսերի գծով՝ 31108.2 հազար դրամ.
Դեֆիցիտը /պակասորդ/ 0,0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2.Հաստատել՝ համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն՝ հատված 1-ի:
3.Հաստատել՝ համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4.Հաստատել՝ համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 3-ի:
5.Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6.Հաստատել՝ համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները համաձայն հատված 5-ի:
7.Հաստատել՝ համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 6-ի:
8.Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետը, թույլատրել՝ 2016թվականի բյուջեով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները մինչև հայտարարված նպատակային մրցույթների արդյունքում պայմանագրերի կնքումը, իրականացնել մեկ անձից գնման եղանակով:

9.Թույլատրել՝ համայնքի ղեկավարին 2016թ. բյուջեի կատարման ընթացքում գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածներում վերաբաշխումներ կատարելու համար սահմանել՝ 50% չափաքանակ:

10.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ 4կողմ 0դեմ 0ձեռնպահ

Հ. Հովհաննիսյան ______
Հ. Ասատրյան ______
Ա. Ասատրյան ______
Ա. Հովակիմյան ______

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական դեկտեմբերի 14
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2015 թվական թիվ 47

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ 0-ԻՑ 10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության մասին 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համայնքում բնակվող 0-ից 10 տարեկան երեխաներին ամանորյա նվերներ ձեռք բերելու համար հատկացնել՝ 220 000 /երկու հարյուր քսան հազար / դրամ:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Հովհաննիսյան ________
Հ. Ասատրյան ________
Ա. Ասատրյան ________
Ա. Հովակիմյան ________

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական դեկտեմբերի14
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Մրգաստան համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2015 թվական թիվ 48

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹԻՎ 01-63 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Կնքել պայմանագիր՝ «էջմիածին քաղաքի Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի հետ, իր փոխադրական միջոցներով կենցաղային աղբը և արտադրական թափոնները տեղափոխելու համար:
2.Մատուցվող ծառայությունների համար հատկացնել՝ 360 000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ:
3.Ամսեկան վճարի չափ սահմանել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:
4.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
5.Հաստատել՝ համայնքի սանիտարական մաքրման սխեմայի նախագիծը համաձայն հավելվածի:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական դեկտեմբերի 14
գ. Մրգաստան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հ. Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի,
ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ,
ԹԻՎ 48 ՈՐՈՇՈՒՄՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1.Կնքել պայմանագիր՝ «Էջմիածին քաղաքի Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի հետ:
2.Կատարողին հանձնարարել իր փոխադրամիջոցով տեղափոխել «պատվիրատուի» կենցաղային աղբը և արտադրական թափոնները:
3.Աղբահանությունը կատարել նախապես համաձայնեցված գրաֆիկով, շաբաթական 3 անգամ:
4.Աշխատանքները կատարել իրենց միջոցներով և աշխատուժով:
5.Աղբի տեղափոխման աշխատանքները կատարել ժամանակին:
6.Նշված ծառայությունները կատարելու համար պայմանագրի գին սահմանել՝ 360 000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ:
7.Ամսեկան վճարը 267քառ. մետրի համար /աղբի զբաղեցրած տարածք/, 30 000 /երեսուն հազար/ դրամ, յուրաքանչյուր քառ. մետրի համար 100 /հարյուր/ դրամ:
8.Կատարել կանխիկ վճարում, յուրաքանչյուր ամիս բանկային փոխանցման եղանակով /համայնքի բյուջեի միջոցների հաշվին/:
9.Համայնքի տարածքում տեղադրել՝ աղբամաններ:
10.Կազմակերպել շաբաթօրյակներ՝ «Մաքուր համայնք» խորագրով:
11.Շաբաթօրյակին մասնակից դարձնել՝ համայնքի բնակիչներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2015թվական թիվ 49

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի Հայաստանի Հանրապետության հոդված 16-ի առաջին մասի 8-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանի նկատմամբ, կիրառել միանվագ դրամական պարգևատրում խրախուսանքի միջոց, աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, մեկ ամսեկան աշխատավարձի չափով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 4կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2014թվական դեկտեմբերի 14
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2015 թվական թիվ 50

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ սոցիալապես անապահով ընտանիքներին, դրամական աջակցություն ցուցաբերելու մասին.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Մետաքսե Ազատի Դավդյանին մոր մահվան կապակցությամբ հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
2.Գայանե Միսակի Հակոբյանին սկեսրոջ մահվան կապակցությամբ հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
3.Վանիկ Վանուշի Սահակյանին մորը բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
4.Հենրիկ Մանուկի Խաչատրյանին, որպես սոցիալապես անապահով հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
5.Մանվել Լյուդվիկի Վարդանյանին, որպես սոցիալապես անապահով հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
6.Արտուշ Վլադիմիրի Խաչատրյանին, որպես սոցիալապես անապահով հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
7.Հայկ Էդիկի Եդիգարյանին կնոջը բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
8.Ռոզա Անդրանիկի Հարությունյանին, որպես զոհված ազատամարտիկի մայր հատկացնել՝ հատկացնել՝30.0 /երեսուն հազար/ դրամ:

9.Սիրանուշ Միսակի Խաչատրյանին որդուն բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
10.Նարինե Արամի Գրիգորյանին որդուն հետվիրահատական բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
11.Արաքսյա Սեդրակի Հախումյանին, որպես միայնակ թոշակառու հատկացնել՝ 20 000 /քսան հազար/ դրամ:
12.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | | |
|---|---|---|---|
| Ավագանու անդամներ | 4 կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |

Հ. Հովհաննիսյան ________
Հ. Ասատրյան ________
Ա. Ասատրյան ________
Ա. Հովակիմյան ________

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական դեկտեմբերի 14
գ. Մրգաստան